ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ **ք.Եղեգնաձոր**

N 40 **04 մայիսի 2017թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 37 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2017 թվականի ապրիլի 25-ի <<Մաքուր Հայաստան ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզում մարզային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 37 որոշման հավելվածով հաստատված <<Մաքուր Հայաստան>> ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզում ստեղծված մարզային հանձնաժողովի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

Որոշման հավելվածով հաստատված հանձնաժողովի կազմը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերով.

<<16.Ա.Ղազարյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ – հանձնաժողովի անդամ,

17.Ա.Հովհաննիսյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ – հանձնաժողովի անդամ,

18.Խ.Ասլանյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ – հանձնաժողովի անդամ>>:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ